



**Սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամությունն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի ապահովումը Հայաստանում**

**Փաստացի իրավիճակը**

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված են ավելի քան 50.000 սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք: Չնայած Հայաստանի Հանրապետությունը որոշակի քայրեր է ձեռնարկում սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման համար, այնուամենայնիվ այս անձանց իրավունքների պաշտպանությունը շարունակում է մտահոգիչ մնալ:

Համաձայն բժիշկ-հոգեբույժների՝ հոգեբուժական բուժհաստատություններում գտնվող անձանց 50 տոկոսը այդտեղ գտնվելու կարիք չունի, մինչդեռ նրանք երկարաժամկետ խնամք են ստանում այդ հաստատություններում /մահճակալների թիվը՝ 1483<sup>1</sup> /: Գործում են նաև չափահաս անձանց երկարաժամկետ խնամքի հաստատություններ՝ ընդհանուր 570 անձի համար: Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող այս անձինք հաշմանդամության պատճառով փաստացի երկարաժամկետ գտնվում են հատուկ հաստատություններում՝ մեկուսացված համայնքից ու առանց այդ հաստատություններից դուրս գալու հեռանկարի<sup>2</sup>:

Որպես կանոն հատուկ հաստատություններում երկարաժամկետ գտնվող անձինք դատարանի որոշմամբ ճանաչված են անգործունակ՝ զրկված հաստատություն ընդունվելու կամ հաստատությունից դուրս գալու վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքից: Ընդ որում անգործունակ ճանաչված անձինք հատուկ հաստատությունում հաճախ տեղավորվում են խնամակալի կողմից շահադիտական՝ խնամարկյալի գույքին տիրանալու կամ դրանից օգտվելու նպատակով:

Ավելին, հաստատությունից դուրս գալու հեռանկարից զրկված են նաև հատուկ հաստատություններում գտնվող սոցիալ-հոգեբանական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները. 18 տարին լրանալուց հետո նրանք շարունակում են մնալ գործող մասնագիտացված մանկատներում կամ միանգամից տեղափոխվում են չափահաս անձանց համար նախատեսված հատուկ հաստատություններ:

Մեկուսացված լինելուց բացի, ըստ հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից այդ հաստատություններում իրականացվող ուսումնասիրությունների՝ հաստատություններում առկա են մարդու իրավունքների լուրջ խախտումներ՝ անձինք զրկված են իրենց վերաբերյալ որոշումների կայացման, անկախ ապրելու հնարավորությունից, առկա է կյանքի վատ պայմաններ, աշխատանքային շահագործում, ֆիզիկական և հոգեբանական բռնություններ, ոչ բուժական նպատակով ֆիզիկական զսպման միջոցների կիրառման, ծեծի, սպառնալիքների, ճնշումների, բարկանալու և այլ ձևերով: Սոմատիկ հիվանդությունների բուժման, կանխարգելման ցածր մակարդակի պատճառով հաստատություններում մեծ թիվ են կազմում մահացությունները /համաձայն հոգեբուժական 8

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90364> /հայերեն տարբերակ/

<sup>2</sup> Այս հաստատությունները լիովին բնակեցված են և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում առկա է անձանց ցուցակ, ովքեր հերթագրված են որևէ խնամքի հաստատությունում ընդունվելու համար:

հաստատություններից ստացված տվյալների՝ 2006-2015 թթ. ընթացքում այդ հաստատություններում մահացությունների ընդհանուր թիվը կազմել է 373, այդ թվում՝ սոմատիկ հիվանդությունների պատճառով՝ 366, ինքնասպանության պատճառով՝ 7: Քրեական գործ հարուցվել է միայն 42 դեպքի վերաբերյալ, որոնցից բոլորը կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով:

Համայնքում ապրող սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես մեկուսացված են համայնքից: Այն պայմանավորված է համայնքում ներգրավվելու, համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ աջակցության, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանական ծառայությունների, կրթական ծրագրերի բացակայությամբ, ինչպես նաև խարանի, կարծրատիպերի ու խտրական վերաբերմունքի առկայությամբ:

Համայնքահեն ծառայությունները որպես կանոն բացակայում են ամբողջ հանրապետության տարածքում: Գործող համայնքահեն ծառայությունները տրամադրվում են հասարակական կազմակերպությունների կողմից, սակայն վերջիններս հատային են և կենտրոնացած են հանրապետության մայրաքաղաքում:

Հոգեբուժական հաստատությունները ՀՀ-ում օգտագործվում են նաև որպես պատժիչ միջոց քաղաքացիական և քաղաքական գործիչների նկատմամբ (ադմկահարույց էր 2016 թվականին քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի դեպքը, երբ նրա նկատմամբ կիրառվեց դատահոգեբուժական փորձաքննություն, իր նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում քննությունը վարող քննիչին ՀՀ-ում 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների վերաբերյալ հարցեր առաջադրելու պատճառով, ինչպես նաև իրավապաշտպան Արմինե Առաքելյանի դեպքը, երբ Հանրապետության հրապարակի շատրվանի ավազանում նստելու համար նրան անմիջապես տեղափոխեցին հոգեբուժական հիվանդանոց):

## **ՀՀ կողմից ձեռնարկվող միջոցառումները**

Հայաստանի Հանրապետությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացումից հետո մշակել և ընդունել է երկու հայեցակարգային փաստաթղթեր՝ ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը և Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման 2013-2017թթ. հայեցակարգը և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը:

Այս փաստաթղթերի իրականացումն ուղղված է նաև կոնվենցիայով պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ մասնավորապես 19-րդ հոդվածի ապահովմանը:

Նշված փաստաթղթերով սահմանված միջոցառումները, սակայն, չեն իրականացվում սահմանված ժամկետներում, պարզ չեն միջոցառումների իրականացման համար նախատեսված ֆինանսական աղբյուրները և ծավալները, չնայած միայն ֆինանսական միջոցների ապահովումը կարող է երաշխավորել միջոցառումների արդյունավետ իրականացումը:

Վերոնշյալ փաստաթղթերի շրջանակներում նախատեսված էր 2014-2017 թվականների ընթացքում ստեղծել համայնքահեն տիպի ծառայություններ (խնամքի շուրջօրյա տներ, այդ թվում՝ տարեց անձանց համար, ցերեկային կենտրոններ, այդ թվում՝ երեխաների, դեռահասների, տարեց անձանց համար, սատարող բնակարաններ):

Հոգեբուժական հաստատությունների ապահինստիտուցիոնալիզացման գործընթացի շրջանակներում հիմնադրվել է միայն Սպիտակի խնամքի տունը՝ որպես պիլոտային ծրագիր /2016 թվականի ապրիլ/: Մինչ այժմ այն գործել է Բաց Հասարակության Հիմնադրամներ կազմակերպության ֆինանսավորմամբ:

Մինչդեռ գրեթե մեկ տարվա գործունեությունից ու բավականին լուրջ դրական ցուցանիշներից հետո փաստացի պետական ֆինանսավորման բացակայությունը և հետագայում ֆինանսավորման հնարավորության պարզ չլինելը հանգեցրել է խնամքի տան գործունեության շարունակականության ապահովման և խնամքի տանը իրենց վերագտած անձանց փակ տիպի հաստատություն վերադառնալու վտանգին:

Չնայած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքահեն ծառայությունները նվազ ծախսատար են<sup>3</sup>, այդուհանդերձ պետությունը էական քայլեր չի ձեռնարկում պետության միջոցներն այդ ուղղությամբ ներդնելու համար: Ավելին, դեռևս առկա է պետական կառույցների կողմից հատուկ, փակ տիպի հաստատությունները վերակազմավորելու, վերանորոգելու, ուժեղացնելու ձգտում:

## Առաջարկություններ

- Իրականացնել համայնքահեն ծառայությունների ներդրման նպատակով կարիքների մանրամասն ուսումնասիրություն, գնահատում և դրան համապատասխան ներդնել ծառայություններ:
- Ապահովել Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի և ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների պատշաճ, արդյունավետ, հաշվետու կատարումը:
- Ապահինստիտուցիոնալիզացիայի գործընթացում ապահովել համայնքային և պետական հստակ ֆինանսավորում, այդ թվում՝ ապահովել Սպիտակի խնամքի տան գործունեության շարունակականությունը համայնքային և պետական կայուն ֆինանսավորման միջոցով:
- Քանի դեռ գործում են հատուկ, փակ տիպի հաստատություններ, այդ հաստատություններում ապահովել վերահսկողության հնարավորություն անկախ հասարակական մշտադիտարկման խմբի կողմից:

## Contacts:

**Helsinki**  
59 Tigran  
[www.hcav.am](http://www.hcav.am)  
[hcav@helsinki.org](mailto:hcav@helsinki.org)

Ms Mari  
Monitoring specialist  
[mtemuryan@hcav.am](mailto:mtemuryan@hcav.am)

Ms Susanna Davtyan  
Legal Analyses and Initiatives Department Coordinator  
[sdavtyan@hcav.am](mailto:sdavtyan@hcav.am)

<sup>3</sup> <https://www.hrw.org/report/2017/02/22/when-will-i-get-go-home/abuses-and-discrimination-against-children-institutions>